



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՅԿԱՆ

ՀԱՅԿԱՆ

29

ԲՈՎԱՆԴԱՌՈՒԹԻՒՆ

	Երև.
Քար Գայթակղութեան	225
Հողին Թագաւորութիւնը	225
Քրիստոնէական Եղբայրութիւն	226
Բարկացոտ Խօսքերու Վտանգը	227
Անահաւորութիւն Ապացուցեալ	227
Սըր ձէյմն Երեմի Կիսմարտի	228
Նիւֆրանտիտի Գանձարուտը	228
Եկեղաւորականութիւն Եւ Բոյսերուն Աճումը	229
Կեանք Գտնելու Մեջքը	229
Հաւատարմիկ	230
Հանդէս Քաղաքական	231
Դրամական	232

ԱԻԵՏԱԲԵՐ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ. Կը հրատարակուի ամէն հինգշաբթի օր:

Տարեկան գինն է ամէն տեղւոյ համար կանխիկ 1 1/2 մեծիտիյի, վեցամսեայն՝ 3/4 մեծիտիյի: Թղթատարի ծախքը խմբագրութեան վրայ է: Մեկ քերթի գինն է 30 փարս:

Հրատարակելի կամ խմբագրութեան վերաբերեալ նամակներ պարտին ուղղուիլ առ Տր. ձ. Ֆ. Հէրիֆ, իսկ բաժանորդագրութեան վերաբերեալներն՝ առ Տր. ձ. Ք. Կրիտ, Ամերիկացի խան, Կ. պոլիս:

Ամերիկայի Միտիսարաց Ընկերութեան կողմէն,
ձ. Ք. Կրիտ, ԱՐՏՕՆԱՅԷՐ
ձ. Ֆ. Հէրիֆ, ՏԵՐԵՆ-ԻՄՏԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՍՈՒԹԵԱՆ

Խոստովանութիւնը ներումէն և ներումը զօրութենէն առաջ ըլլալու է: Նշանաւոր աւետարանիչ մը զայս հաստատարու համար իր փորձառութիւնը կը պատմէ:

Քաղաքի մը մէջ, ուր կը գործէր այդ աւետարանիչը, մարդ մը սա հարցումն ըրաւ անոր. «Կրնա՞ք ըսել թէ ինչո՞ւ ես զօրութիւն չունիմ քրիստոնէական կեանքիս մէջ: Կիրակնօրեայ դպրոցին մէջ կարգ մը մարդոց դաս կու տամ երեք տարիէ ի վեր, բայց չկրցայ անոնցմէ մէկը քրիստոսի առաջնորդել:» «Թերևս սիրտդ հաշտ չէ Աստուծոյ հետ և ծածուկ մեղք մը ունիս:»

Մարդուն դէմքը դեղնեցաւ: Ապա աւետարանչին առանձին սենեակին մէջ սապէս խոստովանեցաւ. «Տասներկու տարի առաջ այնինչ քաղաքի այնինչ առևտրական տան մէջ գրագիր էի: Իրիկուն մը հայրենեաց փակելու ատեն երկու հարիւր տոլարի յաւելում մը գտայ, որուն պատճառը չկրցայ իմանալ: Հա-

չուներս շտակ էին, բայց այդ գումարը կ'աւելնար: Միւս օրը և միւս շաբաթը հաշուեկշիռ եղաւ, և տակաւին այն աւերորդին տեղը չգտնուեցաւ: Այն ատեն Սատանան ինծի ըսաւ, «Գուք առէք զայն և գործածեցէք, ոչ մէկը պիտի իմանայ. և եթէ հարկ ըլլայ՝ կարող էք վերադարձնել:» Աստուած ողորմի ինծի: Առի և դեռ ետ դարձուցած չեմ: Ահաւասիկ այն գումարը:» Զայս ըսելով յանձնեց դրամը աւետարանչին:

«Ես չեմ կրնար առնել,» ըսաւ նա, «դուք պիտի վերադարձնէք խոստովանութեամբ:» Մարդը տեղէն ցատկեց՝ գոչելով, «Երբեք չեմ կրնար: Տարեկան քսան հազար տոլարի ամսականով պաշտօն մը ունիմ հիմա, և պիտի կորսնցընեմ զայն եթէ իմացուի թէ ես անհաւատարիմ եղած եմ անցեալին մէջ:» «Կ'ամ պիտի երթաք խոստովանիք, կ'ամ պիտի հրաժարիք զօրութիւն ստանալու յոյսէն,» ըսաւ աւետարանիչը:

Մարդը վայրկեան մը հանդարտ կեցաւ: Ապա ոտք ելաւ և գոչեց, «Եթէ մեռնիմ ալ, պիտի երթամ:» Գնաց ուղղակի այն քաղաքը ուր տեղի ունեցած էր դէպքը, մտաւ դրասենեակն անոր որուն դէմ մեղանշած էր, և խոստովանեցաւ: Քրիստոնէայ վաճառականը մտիկ ըրաւ անոր, ապա ելաւ դոցեց դրասենեակին դուռը, և ըսաւ, «Հիմա աղօթե՛ք:» Ծունկի վրայ եկան և աղօթեցին: Յետոյ վաճառականն ըսաւ միւսին. «Չեր գործին գացէք, և Աստուծոյ օրհնութիւնը ձեզի հետ ըլլայ: Կը ներեմ ձեզի ճիշդ այնպէս ինչպէս ինք կը ներէ:»

Մարդը իր տունը վերադարձաւ ուրախ զուարթ: Հետեւեալ կիրակի օրը իր աշակերտներուն առջև նստաւ քրիստոսի վրայով պատմելու: Ըսաւ անոնց, «Մինչև այս շաբաթու չէի դիտեր թէ ինչ պատճառաւ անկարող էի ձեզ քրիստոսի առաջնորդելու: Հիմա դիտեմ: Պատճառը ան էր որ ես ինքս ուղիղ մարդ մը չէի:» Ապա այնպէս ազդուապէս խօսեցաւ անոնց որպէս բնաւ չէր խօսած: Արդիւնքը սա եղաւ որ իր ա-

շակերտներուն ամէնքը ընդունան քրիստոս իբրև Փրկիչ, և քանի մը կիրակի ետքը իր եկեղեցւոյն սեպագամակցեցան:

Շատ դիւրին է հասկնալ պատճառը: Աստուծոյ հետ հաշտուեցաւ: Ապա Հոգին Սուրբ, որ բոլոր ատենը անոր մէջ կը բնակէր, գործածեց զայն: Այս է միշտ Հոգիին գործելու կերպը:

ՀՈԳԻՒՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Յայտնի է թէ շատ քրիստոնէաներ պէտք ունին Սուրբ Հոգիին թագաւորութեանը վրայ աւելի կատարեալ տեղեկութիւն ստանալու: Իրենց ընդհանուր գաղափարը սա է թէ Հոգին է տակաւին երկրէս վեր տեղ մը, հաւանութեն երկինքը: Շատ անգամ կը լսենք աղօթքներ, որով եղբայրներ և քոյրեր Աստուծմէ կը խնդրեն «որ Սուրբ Հոգին զրկէ:» Ստեպ կ'աղօթեն «Սուրբ Հոգիին հեղման համար:» Այս լեզուէն կը հասկցուի թէ աղօթողները կը հաւատան որ Հոգին տակաւին վերն է: Բայց այս սխալ գաղափար է: Օրհնեալ ճշմարտութիւնը սա է թէ Հոգին արդէն հոս է երկրի վրայ, և հոս եղած է Հոգեգալստեան փառաւոր օրէն ի վեր: Իր գալուստն յաշխարհ այնպէս որոշ, ուղղակի և անձնական եղաւ որպէս էր քրիստոսի գալուստը: Քրիստոս երկինքէն ելաւ իբրև մարդը հոգի, որոշ անձնաւորութիւն, և մարմնացաւ ճշմարտապէս մարդ ըլլալով: Հիմա ամենուրեք կը թագաւորէ Հոգին: Իր գալուստը սքանչելի եղանակաւ յայտնեց: Իջաւ մեծ զօրութեամբ: Պենտեկոստէն հոգեւոր թուականի մը սկիզբը եղաւ, նախորդ ամէն դարագլուխ գերազանցող: Քրիստոսի թագաւորութիւնը փառաւոր էր: Հոգիին թագաւորութիւնն աւելի փառաւոր է: Քրիստոսի թագաւորութեան մէջ լոյսը շատցաւ, Աստուծոյ գիտութեան լոյսը Յիսուս քրիստոսի դէմքէն փայլեցաւ: Բայց Հոգիին թագաւորութեան մէջ երկինք լոյսը աւելի առատ է: Խաչին լոյսը իր ռաւաւիղները կ'արձակէ ամբողջ աշխարհի

վրայ: Հոգիին լուսով ֆրիստոս այնպէս կը տեսնուի ինչպէս երբեք չտեսնուեցաւ մարդոցմէ երբ երկրի վրայ կը թաղաւորէր: Արդի քրիստոնեան աւելի բան գիտէ ֆրիստոսի վրայ քան զոր աշակերտներն իսկ գիտէին անոր օրով: Քրիստոնեաները ֆրիստոսի վրայ աւելի բան կը սորվին Հոգիին մեկնութիւններուն միջոցաւ: Շարունակ միտք պահելու ենք սա պատուական ճշմարտութիւնը թէ Հոգին Պենտեկոստէէն ի վեր բնաւ թողած չէ այս աշխարհը: Նա եկաւ մնալու համար: Քրիստոս ինքը սապէս քսաւ. «Ես Հօրը պիտի աղաչեմ, և ուրիշ Մխիթարիչ մը պիտի տայ ձեզի, որ յաւիտեան ձեզի հետ բնակի»: Այսպէս խրատուեց ֆրիստոս իր աշակերտները, երբ տրտում էին սա պատճառաւ որ պիտի մեկնէր աշխարհէս: Բնաւ թէ Հոգին պիտի գայ և մխիթարէ զանոնք: Պիտի մնայ իր ժողովրդին քով զալու բոլոր դարերուն մէջ: Եւ իր դալէն ետև չեղաւ առաքելալ մը կամ աշակերտ մը որ աղօթէր անոր գալուն համար: Ամէնքը գիտեն թէ եկած է: Եւ տակաւին իր ժողովրդին հետ է: Անոնց բոլորալիքն է: Անոնց սրտին մէջ է, միշտ ներկայ, միշտ առաջնորդ, միշտ ուսուցիչ, միշտ մխիթարիչ, միշտ օգնական, միշտ բարեկամ: Եթէ լիովին ներկայ չէ մեր սիրտերուն մէջ, պատճառը սա է որ ազատ մուտք չենք ընծայեր անոր, սիրով և խանդավառութեամբ չենք ողջուներ իր գալուստը: Ուրեմն փոխանակ աղօթելու որ Հոգին մեր վրայ թափի կամ իջնէ, միայն թոյլ տալու ենք որ լիովին հաստատուի մեր սիրտերուն մէջ և ամբողջովին իշխէ մեր կեանքերուն: Եւ ինչ որ անդարձները ընելու են՝ ուրիշ բան չէ, բայց միայն թոյլ տալ որ Հոգին իրենց սիրտերը մտնէ, զիրենք մեզքի համար յանդիմանէ, իրենց բնութիւնները փոխէ և զիրենք կենդանացնէ:

ՔՐԻՍՏՈՍՆԷՆԱԿԱՆ ԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆ
(Խմբագրական)

Գ. Հայ օրհեռո՞ւ ֆորձը
Յունիս 17 թուով Աւետիքէի մէջ ըսուեցաւ թէ Ամերիկացի միսիոնարներ՝ ոչ իրրեւ միսիոնարական այլ իրրեւ մարդասիրական ձեռնարկ մը յանձն առին խնամել այնչափ Հայ որբեր որչափ իրենց յանձնուած նպատակները կարելի ըրին անտպարանօք եւ անժամապէս խնամել: Ըսուեցաւ նաեւ թէ, թէեւ միսիոնարները ձեռնարկած են կրթել ինչպէս եւ պատասխարել, կերակրել եւ հագուեցնել այդ տղաքը, ամենեւին դիտաւորութիւն չունին զանոնք Բողոքական ընելու, եւ իրենց ծրագրին որոշ մի մասը կը կազմէ անոնց սորվեցնել իրենց ազգային լեզուն եւ սիրալիր յարգանք տածել տալ հանդէպ իրենց մայրենի եկեղեցոյն: Յունիս 8 թուակիր Աւետիքի խմբագրականով, ի շարս հիմնական այն սկզբանց որ մեզի կ'առաջնորդեն բոլոր մեր գործին մէջ, յայտ-

նեցինք թէ մեր նպատակը եկեղեցական արդէն կեցած յարաբերութիւնները խանգարել չէ, այլ բոլոր մեր կարողութեամբ զուտ Աստուածաշնչական եւ քրիստոնէական կրթութիւն ծաւալել քարոզութեան, զպրօններու եւ մամուլի միջոցաւ:

Արդ, որբանոցի խնդրոյն գալով, նախնական չորս դիտողութիւններ կ'ընենք:

(ա) Գերմանական նպատակներով սկսուած որբանոց մը գործն արդէն մեծ մասամբ Գերմանական տնօրինութեան եւ հսկողութեան ներքեւ առնուած է ամբողջովին: Նոյնպէս կրնայ ըսուիլ, թէեւ նուազագոյն աստիճանաւ, նկատմամբ գործին որուն ձեռնարկած են Չուիցերացի քրիստոնեայք:

(բ) Այս կարօտ ու որբ տղայք չիմտուեցան և չ'օրհնուեցան միսիոնարներէն, այլ իրենց ողջ ազգականներուն եւ գրացիներուն ձեռամբ բերուեցան միսիոնարներուն, եւ առանց ուրիշ պայմանի խնդրուեցաւ որ միսիոնարներն ընդունին զանոնք, վասն զի մեր դպրոցական գործն արդէն վստահութեան զգացում մը յատուցած է մեզի նկատմամբ: Այսու ամենայնիւ անոնք զորս ընդունիլ կարելի եղաւ՝ կարօտեալներուն փոքր մէկ մասը միայն կը կազմեն:

(գ) Գրեթէ ամէն պարագայի մէջ այս տղայք մեր արդէն իսկ ունեցած եւ քաջածանօթ զպրօններուն, կամ անոնց հետ ուղղակի յարաբերութիւն ունեցող զպրօններուն, մէջ դրուեցան: Պզտիկներուն մանկապարտէզի կրթութիւն տրուեցաւ, մեծերն հասարակ դպրոցներ զրկուեցան իրրեւ ցերեկեայ աշակերտներ, իսկ ոմանք իրրեւ գիշերօթիկ եւ ձիշէ ուրիշ աշակերտներու նման ընդունուեցան Բարձրագոյն Դպրոցներու մէջ, մինչ ուրիշներ առնուեցան որբանոցներու մէջ:

(դ) Մեծ Բրիտանիայէ եւ Միացեալ Նահանգներէն մեզի զրկուած գումարներուն պակսելէն, Նոյն որբանոց գործը, այսինքն Ամերիկացի միսիոնարներուն ձեռքը մնացած գործը, Գերմանական եւ Չուիցերական գործին լիովին կազմակերպուելէն ետեւ հաւանօրէն պիտի սահմանափակուի տեղութեան նոյնպէս եւ ընդունուող տղայոց թուոյն կողմէ: Տնտեսական տագնապին հետզհետէ անցնելով նպաստի գումարները պիտի պակսին:

Արդ, որբանոցի խնդրոյն դառնալով, մեր բոլոր բարեկամներէն կը խնդրենք նկատել թէ մենք աւելի օգտակար կը համարինք սկզբունքներ յայտնել քան մանրամասնօրէն հարցուններու մասնաւոր պատասխաններ տալ, անվերջ եւ անօգուտ հակաճառութեան դուռ բացող: Մարդասիրական շարժումներու վրայ քննադատութիւն ընել միշտ դիւրին է, բայց քիչ անգամ օգտակար:

Ա. Որբանոցի գործով զբաղողներու հետ մեր թղթակցութենէն իմացուեցաւ թէ հասարակ եւ ընդունուած սկզբունքներ տեղային զանազան պարագաներու մէջ ի կիր առնելու գործը շատ մը մանրամասնութիւններ ունի որոնք տեղային դատողութեան, այսինքն այլեւայլ որբանոցներու խնամատարներուն ողջմտութեան, թողուելու են: Օրինակի համար, տեղ տեղ եկեղեցոյ կամ անոր շրջանակին մէջ Լուսաւորչական եկեղեցականներու ձեռամբ աշակերտներէ ոմանց տրուած հրահանգութիւնը կ'ընդունուի սիրով եւ օգտակար է: Տեղ տեղ ալ պարագաներն անյարմար կ'ըլլան այդպիսի յաւելուածական հրահանգու-

թեան: Առ հասարակ որբանոցներու Լուսաւորչական տղայք կրնան կիրակի օրեր եւ շաբթու մէջ մասնաւոր առիթներով եկեղեցի երթալ, եթէ հեռաւորութիւնն ատոր արգելք մը չըլլար:

Բ. Որբանոցները ամէն յարմար առիթներ բաց են եկեղեցական թէ աշխարհական բարեկամներու այցելութիւններուն, պայմանաւ որ այդ այցելութիւններ զիկտատորական բնութիւն չունենան, այլ ըլլան քրիստոնէական քաղաքավարութեան սահմաններու մէջ:

Գ. Ոչ մէկ տղայ, Բողոքական հսկողութեան տակ գտնուող որբանոցի մը մէջ ըլլալուն համար, նուազ Հայ պիտի ըլլայ: Որբանոց մը մարմիններուն վրայ կատարեալ փութեամբ լիակատարութիւնը և օրհնութիւնը պիտի սորվեցնեն իրենց մայրենի լեզուն, պիտի սիրցնեն իրենց ժողովուրդը եւ զանոնք ուղղակի պիտի պատրաստեն օգտակար ըլլալու այն ժողովրդին որուն կը պատկանին: Որբերուն Աստուածաշնչի դաս պիտի աւանդուի ոչ իբրև Լուսաւորչականներու կամ իրրեւ Բողոքականներու:

Դ. Ամերիկացի միսիոնարներուն յանձնուած բոլոր որբերուն հոգածութիւնը եւ մտաւորական, բարոյական եւ Աստուածաշնչական հրահանգութիւնն հարկաւորապէս իրենց հսկողութեան ներքեւ պիտի մնան ամբողջովին: Բաժանեալ պատասխանատուութիւն եւ արտաքին միջամտութիւն անկարելի է, ինչպէս անկարելի է նոյն միսիոնարներուն խնամոց ներքեւ գտնուող զանազան կարգի զպրօններուն մէջ: Առկէ տարբեր ուրիշ ընթացք մնասակար աղբեցութիւն պիտի ունենար տղայոց իսկ միտքերուն եւ բնաւորութիւններուն վրայ, եւ ինչ որ մենք առաջադրած ենք յօգուտ Հայ ժողովրդին՝ պիտի փոխէր նա ընէր խանգարման եւ միտքի առիթ:

Մեր նախորդ յօդուածով ցուցուեցաւ թէ ինչու զիջում չենք ըներ նախախնամաբար մեր խնամոց յանձնուած բոլոր տղայոց կրթութեան եւ դաստիարակութեան վրայ բացարձակ հսկողութիւն ի գործ դնելու խնդրոյն մէջ: Այս սկզբունքը Լուսաւորչական ուսուցիչներու դէմ ուղղուած չէ, բայց որբերու վերատեսուչներուն անկախ դատողութեան կը յանձնէ սա կէտը թէ երբ պէտք է հրաւիրել զանոնք եւ զով պէտք է հրաւիրել:

Ե. Գալով որբանոցներու վերատեսուչներուն կամ տնօրէններուն, ոչ մէկը կ'ընաբուի Բողոքական ըլլալուն համար կամ կը մերժուի Լուսաւորչական ըլլալուն համար: Կը կրկնենք թէ միսիոնարներուն կրթական բոլոր ջանքերուն նպատակն է իրենց խնամոց յանձնուած տղաքները քրիստոնեայ ընել եւ ոչ Բողոքական կամ Լուսաւորչական: Որբանոցին մէջ ոչ մէկուն թոյլ պիտի տրուի ըննադատել ինչ որ առանձնայատուկ է Լուսաւորչական կամ Բողոքական եկեղեցիին: Եւ եթէ տեղ մը, ինչպէս ի Թալաս, Յոյն մը գտնուի որբանոցի վերատեսուչական պաշտօնին աւելի յարմար քան գտնուած ուրիշ ուրիշ անձ, ինչպէս անձամբ գիտենք թէ է Թալասի որբանոցին տեսուչը, անշուշտ այդ պաշտօնին պիտի կոչուի ան: (Թալասի որբերուն ուսուցիչը Ամերիկացի է: Աշակերտներն Հայերէն կ'ուսանին եւ Հայերէն խօսիլ պարտաւոր են:)

Զ. Դժգոհութիւնը, որ վերջերս ստէպ եւ ընդհանուր կերպով յայտնուեցաւ Լուսաւորչական որբերուն նկատմամբ Ամերիկա-

ցիներուն ըրածին դէմ, արդէն իսկ իր արդիւնքն ունեցաւ շատ բնականօրէն, զգալապէս նուազեցնելով Եւրոպայի եւ Ամերիկացի բարեւոյն անձերէն եկած նպաստները, որոնցմէ միայն կախեալ է այս գործին շարունակութիւնը: Միեւնոյն ատեն ո՞վ կը հոգայ որբերու այն բազմութեան համար որոնց օգնութեան համար անկարող եղաւ արեւմտեան քրիստոնեաներու բարեօրէնութիւնը, եւ որոնք մինչեւ ցարդ Լուսաւորչական քրիստոնեաներուն գրեթէ ի զուր երկնցուցին իրենց փոքրիկ ձեռքերը եւ բարձրացուցին իրենց աղերսաւոր ձայները:

ԲԱՐԿԱՅՈՏ ԽՕՍՔԵՐՈՒ ՎՏԱՆԳԸ

Խիստ լեզուն միշտ դատապարտելի չէ: Երբեմն խիստ խօսքի առիթ կը տրուի: Այն մարդը որ բնաւ յուզմամբ չխօսիր, կամ միշտ չափուած, կը շուտ բառերով կը խօսի, առ հասարակ խեղճ մարդ է: Բայց խիստ խօսքերն անհրաժեշտ բարկութեամբ չեն ըսուիր: Բարկացող խօսուածքը ան է որ արդարացուցիչ պատճառ մը չունի: Խօսքին սաստկութեան ու անոր շարժառիթին միջեւ եղած անհամաձայնութիւնն է որ թերութիւն կը սեպուի:

Ատոր մէկ վտանգն է աղքատութեան կորուստ: Առանց բանաւոր պատճառի ըսուած սաստիկ խօսքը մտքի հաւասարակը շարունակութեան պակասութիւն, դատողութեան սխալ կամ չափազանցելու ունակութիւն կը մատնէ, որ անվրէպ կը վնասէ խօսողին վերայ դրուած վստահութեան: Խօսողին ազդեցութիւնն այդ պատճառաւ կը պակսի, կամ գէթ ի չարն կը փոխուի: Ասկէ յառաջ կու գայ նաեւ բարի համբաւի կորուստ: Այնուհետեւ առաջուան պէս նոյն յարգանքը չենք պատուեր խօսողը կամ չենք գիւմեր անոր իբրեւ յարգելի հեղինակութեան մը:

Բայց մեծագոյն վտանգը ան է որ խօսողն իր անձին վրայ պակաս համարում կ'ունենայ, նոյն յարգը չընծայեր իր անձին: Շատ մեղքեր կը նուաստացնեն եւ կ'ամօջնեն մեզ, բայց գրեթէ չկայ ուրիշ մը զոր գործելէ ետեւ այնքան ամօջանք որքան կ'ամօջանք այս մեղքը գործելէ ետեւ: Շատ ուշ կ'իմացուի թէ վայրկեանական բարկութեան մը համար, որ տեւական գոհացում մը չտուաւ եւ որ ճշմարտապէս հաճելի չէր այն վայրկեանին իսկ, արժանապատուութեան զգացումը եւ անձնական ազդեցութիւնը վտանգել ամենեւին չէր արժեր: Այս ճշմարտ է ոչ միայն բարկութեան եւ կրից խօսքերու նկատմամբ, այլ եւ խօսքի այն չափազանցութիւններուն նկատմամբ, որոնց այնչափ սովորած են ոմանք որ հասարակ բաներն անիմաստ կը թուին իրենց: Բարկութեան խօսքեր եւ չափազանցութիւններ անտեղի եւ միանգամայն փաստակար են: Կը վնասեն մեզի եւ մեր բարեկամներուն, եւ քնաւ չեն վայրեր քաղաքավար եւ բարեկիրթ, չըսենք քրիստոնեայ, մարդոց ու կանանց:

ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ ԱՊԱՅՈՒՅԵԱԼ

Թէպէտ Յիսուսի յարութեան ապացոյցը համոզիչ է, եւ սակայն տակաւին բացատրութեան կարօտ բան մը կը մնայ անմահութեան փաստին համար: Երբ Յիսուսի յարութիւնը իբրեւ միակ փաստ կը գործածուի հաստատելու համար թէ մենք ալ յարութիւն պիտի առնենք, կայ տրամաբանական թերութիւն մը զոր պէտք է լեցնել:

Ողջամիտ տրամաբանութիւնը չկրնար մասնաւոր իրողութենէ մը տիեզերական եւ ընդհանուր օրէնք մը ապացուցանել: Շատ շատ կրնայ միայն մակարեբել թէ եթէ այս է իրողութիւնը, պէտք է գտնուի ընդհանուր օրէնք մը որուն համեմատ կարենայ տեղի ունենալ այն: Ահա ասոր վրայ, եթէ կարելի է հաստատել զայն, պարտի մեր եղբակացութիւնը հիմնուիլ: Ուստի, տրամաբանօրէն, Յիսուսի յարութիւնը ստորագաս եւ օժանդակ փաստ է անմահութեան, մինչ պատմաբանօրէն միշտ առաջնակարգ դիրք կը գրաւէ:

Նոյն իսկ Նոր կտակարանը կը ճանչնայ Յիսուսի յարութեան պատմական իրողութիւնը ինկատ չառնելու այս տրամաբանական հարկը, որուն ընդհանուր օրէնքին տեսակարար մեծ օրինակն է այն իրողութիւնը: Սուրբն Պետրոս կ'ըսէ թէ Քրիստոս մեռելներէն յարութիւն առաւ «քանզի հնար չէր որ ինքը անկէ (մահէն) բռնուի»: Սուրբն Պողոս կ'ըսէ թէ Քրիստոսի Աստուծոյ Որդի ըլլալը իր սրբութեանը համար «յայտնուեցաւ մեռելներէն յարութիւն առնելով»: Այս կը նշանակէ թէ անոր սուրբ հոգին բնական, այսինքն՝ անհրաժեշտ, յարբերութիւն մը ունէր անոր յարութեանը հետ:

Խորհելու այս դրութիւնը արժանի է աւելի ընդարձակօրէն ինկատ առնուելու քան զոր սովորաբար կ'առնուի: Ըսել կ'ուզենք՝ սրբութեան հոգեոյն բնական վախճանը, Քրիստոսանման հոգին, հանդերձեալ աշխարհին կեանքին բարձրանալու համար: Յիսուս ասոր վրայ բաւական գաղափար կու տայ իր յաւիտեանական կեանքի վրայ վարդապետած ժամանակը իբրեւ տեսակ մը կեանքի վրայ որ կը սկսի հիմա եւ հոս: «Անոր ինձի կը հաւատայ՝ յաւիտեանական կեանք ունի»: «մահէն կեանքի փոխուած է», եւն: Հիմնական իրողութիւնը, որուն վրայ հանդերձեալ կեանքին հաւատքը պարտի հաստատուիլ, նոյն իսկ այս աւուր կեանքին գոյութիւնն է:

Արդարեւ այսօր երկու տեսակ կեանք կայ՝ Կրնանք զանազանել զանոնք, անուանելով կենդանական եւ բարոյական: Եւ «բարոյական» բառը գործածելով այն կենսական նշանակութեամբ՝ որով նոյն ինքն Աստուծոյ վրայ կը խօսուի իբրեւ բարոյական էակի մը վրայ: Թէ անոնք երկու են եւ ոչ մէկ, պարզ եւ յայտնի է անոնց զարգացման ներհակ կերպերէն: Կենդանական կեանքը կը զարգանայ նիւթական բաներով: Իսկ բարոյական կեանքը կրնայ զարգանալ նիւթական բաներէ հրաժարելով: Բարոյական կեանքը իրաց աշխարհը զոհ ընելով, զոր կենդանական կեանքը կը ճգնի վայելել, կը ցուցնէ թէ անկախ է այդ աշխարհէն եւ անոր իշխանութենէն, այնպէս որ կրնայ ապրիլ անկէ բոլորովին անջատ:

Բոլոր դարերուն մէջ բազմութիւններ կը տեսնուին որ կը հրաժարին այն բաներէն զորոնք անցաւոր կը համարին եւ կը յարին այն բաներուն զորոնք անանց եւ յաւիտեանական կը համարին: Կը տեսնուին որ նախամեծար կ'ընտրեն ճշմարտութիւնը՝ զիւրակեցութենէն, մարդասիրութիւնը՝ զեղիւթութենէն, աստուածապաշտութիւնը՝ նիւթական շահէն, եւ անարժան ցաւով մեռնիլ՝ անարժան զովեստով ապրելէն: Եթէ նկատենք պատմութիւնն այն շարունակական յաղթանակներուն՝ զորոնք ամէն մարդու կողմէ իբրեւ բարձրագոյն ճանչցուած շարժառիթներ տարած են այն բաներուն վրայ զորոնք

ամէն մարդ ստորնագոյն կը համարի, կենդանական կեանքին ամենէն հզօր եւ խրոխտ ընազգները գերագոյն ոյժէ մը ընկճուած կը տեսնենք: Արդ, այս յաղթական ոյժը կրնայ բանաւորապէս ենթադրուիլ թէ անտափ պատրանքի մը վրայ հիմնուած է:

Կենդանական աշխարհին մէջ ամենէն աւելի չնաշխարհիկ եւ զարմանալի ընկերելոյթն է մարտիրոսին՝ մահն ընտրելը, այո, ուրախութեամբ ընդգրկելը իբրեւ պահպանող բարոյական կեանքին: Կրնայ մէկը ըսել թէ մարտիրոսը պահպանեց իր արդարութիւնը, բայց չպահպանեց արդարութեան կեանքը, եւ իր մահուան հետ վերջացաւ այդ կեանքը: Ո՞րը պիտի ընդունինք: Կամ բարոյական բնազդը, որ կը հրաժարի այս աշխարհէն քան իր արդարութենէն, բոլորովին անտեղի բնազդ մըն է, որ կը մերժէ ամէն բան լոկ ոչնչութեան մը համար, եւ կամ մրցանակը զոր ձեռք բերելու համար կը ճգնի մարտիրոսը, կ'արժէ իր վճարած գինը, եւ այն աշխարհը որուն կը փափաքի, այնքան իսկական է որքան այն աշխարհը զոր կը զոհէ: Անոր գոյութիւնը այդ աշխարհին մէջ այնքան իսկական է որքան գոյութիւնը այս աշխարհին մէջ:

Անմահութեան փաստը որուն այսպէս կը հասնինք, այնպիսի տեսակ փաստ մըն է զոր մաթեմատիքական տրամաբանութիւնը կը գործածէ իբրեւ վճարական, երբ կ'ապացուցանէ նախադասութեան մը ճշմարտութիւնը՝ ապացուցանելով անոր հակառակին անտեղութիւնը: Ամէն տրամաբանութիւն թէ՛ գիտական նիւթոց վրայ ըլլայ թէ՛ կրօնական նիւթոց վրայ, հիմնուած է սա ենթադրութեան վրայ թէ Բնութեան վկայութիւնը ճշմարտ է: Հակառակ ենթադրութիւնը վերջ պիտի տար ամէն տրամաբանութեան, եւ ուստի անտեղի է: Այս տեսակէն է ենթադրութիւնը թէ բարոյական բնութիւն ունեցող գերագոյն բնազդը էսպէս պատրուական է այն վկայութեան մէջ զոր կ'ընծայէ Յիսուսի սա խօսքին, «Ես իմ կեանքս կը դնեմ, որ նորէն առնեմ անիկա»:

Այսպէս կրնանք հաստատել երկրաւոր կեանքէն ետեւ նորէն ապրելու ընդհանուր օրէնքը, որուն միակ օրինակը պատմութեան մէջ Յիսուսի յարութիւնն է: Այսպէս, անմահութեան մասին մեր հաւատքը երբեք պէտք չունի այն փաստերուն եւ վաւերացումներուն զորոնք շատեր կը փնտռեն մեր զգայարաններուն տակն ինկած արտաքին իրողութեան մը մէջ: Այդպիսի ապացոյց մը, եթէ ձեռք բերուէր ալ, կրնար միշտ վէճի ենթարկուիլ ըսելով թէ զիտողութիւնները կամ տեղեկագիրները անկատար են. մանաւանդ երբ իրողութիւնները հեռաւոր ժամանակներու կը պատկանին: Այսպիսի վէճերու ենթակայ չէ մեր յիշած ապացոյցը որ չկրնար հերքուիլ տառանց տապալելու բանաւոր հիմը: Որուն վրայ բոլոր մարդկային գիտութիւնը իր վերջնական կայքը կը գտնէ: Աղէկ կ'ընենք եթէ փարինք ըստ պատշաճի ապացուցուած պատմական իրողութեան: Աւելի աղէկ կ'ընենք եթէ իրողութեան տակը գտնենք անոր գոյութեան բանաւոր պէտքը: Տարակոյտը կրնայ տկարացնել բանի մը գոյութեան ապացոյցին ոյժը: Բայց ինչ որ յայտնապէս պարտի գոյըլլալ, տարակոյտ վեր է. բացառութիւն է այն տարակոյտը որ տրամաբանութեան անձնասպանութիւնն է:

ՍՐՐ ԶԵՅՄՍ ԵՂՆԿ ՍԻՄՓՍՐՆ
(Շար. «Ա. Ի. Ե. Տ. Ա. Բ. Ե. Բ.»-ի նախորդ թիւին և վերջ)

Քրիստոսի իբրև անզգայացուցիչ կիրառութիւնը չէ միակ կէտը որուն համար բժշկութեան արուեստը երախտապարտ մնալու է Տր. Սիմփսընի :

Աւելի վերջերը շատ ուշադրութիւն տուաւ սա խնդրոյն թէ, փոխանակ փոքրիկ տնակներ գործածելու իբրև հիւանդանոց, կը գործածուին աւելի մեծ հաստատութիւններ՝ բժշկութեան եւ վիրաբուժութեան պատկանեալ հիւանդներ եւ ախտաքննարկող դարմանելու համար : Անվիճելի վիճակագրութիւններով հաստատեց թէ մանր շատ մը աւելի թուով կը պատահի մեծ քան փոքր հիւանդանոցներու մէջ, մանաւանդ մանկաբարձութեան եւ վիրաբուժութեան դէպքերու ատեն : Մեծ հիւանդանոցները քաղաքներու մէջ առաւելութիւններ ունին թէ՛ հանգստութեան եւ թէ՛ տնտեսագիտութեան մասին, մանաւանդ եթէ բժշկական դպրոցները կապակցեալ ըլլան հիւանդանոցներուն հետ : Այսու ամենայնիւ Փրոֆէսըր Սիմփսընի տեսութիւնները աւելի մեծ խնամքով տուած են աւելի վերջերս շինուած շէնքերուն կառուցման ոճի մասին, որոնց նպատակն է հիւանդներն իրարմէ դատ սեւեակներու մէջ դնել, եւ աւելի լաւ հսկողութիւն ընել հիւանդանոցներու խուցերուն ընդարձակութեան եւ հովանարուելուն :

Բայց ինքը նոյնքան նախանձաւորութիւն ունէր հետազօտելու նախապատմական հրնութիւններ, դադարներ, վախճանեալին մոխիրը պարունակող սափորներ, նախաժամանակեայ խեցեղէն անոթներ, գայլախաղէ կամ քարէ գործիքներ եւ դէնքեր, եւ վաղեմի յիշատակարաններ, մասնաւորապէս քանդակեալ քարեր, որոնց Սկովտիոյ շատ կողմերը գտնուելը նախ ինքը ծանոյց :

Որովհետեւ Աստուծոյ Խօսքին խոստումներուն պարզ հաւատացող մըն էր, կը հաւատար աղօթքի աղղցութեան : Հիմա առաջին անգամ իր յատուկ եւ զօրաւոր մտքին ոյժը նուիրեց Սուրբ Գրոց ուսմանը՝ հաւատքով աղօթելով Հոգւոյն Սրբոյ լուսաւորող եւ արթնցնող կարողութեանը համար : Ուստի զարմանք չէ որ արագ արագ յառաջդիմեց կրօնական հմտութեան եւ հոգեւոր շնորհաց մէջ : Եւ թէ՛ իր ընտանեաց մէջ եւ թէ՛ առանձնութեան մէջ Աստուածաշունչի ժրջան ընթացող մըն էր, եւ աղօթող մը : Երբեք բացակայ չէր գտնուել Աստուծոյ տունէն բաց ի այն ժամանակներէն երբ անհատկապէս կ'ուներ արհեստներու երթալու :

Իր որդւոյն ձէմի մահուընէն քիչ առաջ պատահած միջադէպ մը խորապէս աղղցեց իր վրայ : Այս միջադէպը մեծ հետեւանք պիտի ունենար . պատճառ պիտի ըլլար հրապարակաւ եւ արիւարար քրիստոնէական հաւատքը դաւանելուն : Հոս կը դնենք նոյն իսկ Սիմփսընի խօսքերը . «Վերջին հակաճառութիւններէն մէկուն մէջ զոր տղաքն ունեցան իրարու հետ ձէմի մեղմէ մեկնելէն առաջ, մեր փոքրիկներուն մէջ դադարի տարբերութիւններ տեսնուեցան թէ իրենք — որոնք հիմա Աստուած ցուցած էր իր անսահման սէրը — պէտք էր որ Քրիստոսի վրայ խօսէին իրենց ընկերներուն : Ձէմի բոլորին կողմանէ լուծեց խնդիրը, ըսելով թէ, Մենք պէտք է խօսինք Յիսուսի վրայով, վասն զի (հոս թուարկեց պատճառները) փառաւոր բան է այդ » :

Սիրելի զաւկին խօսքերը շարժեց հայրը,

եւ փոքրիկին գերեզմանին վրայ խոտ բուսնի չսկսած՝ Սիմփսըն սկսաւ «խօսիլ Յիսուսի վրայով» : Մարտի 6ին նախագահեց մասնաւոր կրօնական պաշտամունքներու շարքի մը վերջինին որ աւելի ունեցան Գուլին Փողոցի Սրահին մէջ, էտիմպուրկ . եւ հոն գտնուող հոծ բազմութեան խօսեցաւ ուղերձ մը որ նշանաւոր էր սաստիկ եռանդուն եւ միանգամայն պարզ ըլլալուն կողմանէ :

Նոյն ամսուն 20ին խօսեցաւ Համալսարանին բժշկական ուսանողներուն, որոնք ժողովուած էին Բժիշկ Միսիոնարներու Ընկերութեան խնդրանք, որուն յաջողութեան մեծ փափաք կը ցուցնէր արդէն : «Վր զգամ քան քան անկեղծ խօսքով, ինչպէս, «ես յարձար չեմ խօսիլ ձեզի այն կերպի վրայ զոր կ'ակնկալէք լսել ինձմէ : Ես ամենէն ծեր մեղաւորներէն մէկն եմ եւ ամենէն դեռահաս հաւատացեալներէն մէկը՝ այս սրահին մէջ : Երբ ընդունեցի տոմսակ մը որով կը հրաւիրուէի ուղերձ մը խօսիլ հոս, հիւանդութեան անկողնի վրայ կը դառնուէի տենդէ բռնուած, եւ իսկոյն ըսի, 'Չեմ կրնար' : Բայց երբ աւելի խորհեցայ բանին վրայ, զգացի թէ պէտք է որ յանձն առնեմ հրաւերն ընդունիլ եւ առաջարկուածը կատարել : Չեմ կրնար պէտք եղածին չափ եռանդով խօսիլ Յիսուսի կողմանէ . բայց ջանամ քիչ մը խօսիլ Անոր վրայով, Անոր անզուգական սիրոյն, Անոր մեծ փրկութեանը վրայով զոր կը մատուցանէ ձեզի եւ ինձի » :

Այս ժամանակէն սկսեալ Սիմփսըն միշտ պատրաստ էր խօսիլ «Յիսուսի կողմանէ» թէ՛ ուսեալներու եւ հարուստներու՝ իրենց ակումբներուն մէջ, թէ՛ խոնարհագոյն ունկնդիրներու՝ Պաթիկէյթի եւ ուրիշ աւաններու մէջ, եւ թէ՛ Նիւէյթլընի ձկնորսներուն : Շատ անգամ ալ էտիմպուրկի մէջ կրօնական եւ միսիոնարական ժողովներու նախագահութեան պաշտօն կը վարէր : Երբեմն կը նախագահէր «Քէրլպըրի Փակ Առաքելութեան» ժողովներուն որ կը գումարուէին Ազատ Եկեղեցւոյ Համաժողովի Սրահին մէջ, համակրանք արթնցնելու համար ունկնդիրներուն մէջ դէպի հասարակութեան ամենէն աղքատ եւ ամենէն լքեալ դասերը : Այս ժողովներէն մէկուն մէջ առ նուազն 2,000 հոգի կ'ունկնդրէին Փրոֆ. Սիմփսընի մէկ յուզիչ ուղերձին որ հիմնուած էր «Յանցանքներու ու մեղքերու մէջ մեռած» ասացուածին վրայ :

Փրոֆ. Սիմփսընի քրիստոնէական նախանձը եւ կրօնական զբաղումները փոփոխութիւն մը յառաջ չբերին անոր իր սիրելի ուսումնասիրութիւններուն պարապելու սովորութեան վրայ, ոչ ալ արգելք եղան իր պաշտօնական գործը ժրջանութեամբ շարունակելուն : Շատ սրամիտ էր միշտ ամէն տեսակ դիտութեանց մէջ, եւ միշտ եւ հանապազ փափաքով եւ եռանդով կը պարապէր գիտական, գրական եւ հնաստական ուսմանց : Անոր թերթերու եւ պարբերական հանդէսներու համար գրած բազմաթիւ յօդուածները կը ցուցնեն բնութիւնն եւ զանազանութիւնը նիւթերուն եւ խնդիրներուն որոնք կը գրաւէին անոր ուշադրութիւնը : Դայով իր ուսուցչական գործունէութեան, Համալսարանին մէջ Փրոֆէսոր ընտրուելէն հետէ գործը աւելցաւ տարուէ տարի, այնպէս որ հազիւ ուրեմն ժամանակ կը գտնէր հրաւեր մը ընդունելու կամ միտքը ուրիշ բաներու տալու : Այս

բանը աւելի յայտնի տեսնուեցաւ երբ թագաւորութեան եւ կայսրութեան ամէն կողմերէն իրմէ դաստիարակուելու եկող հազարաւոր աշակերտները հոչակեցին իրենց ուսուցչին համբաւը : Հարուստ դասակարգէ հիւանդներու համար սովորութիւն եղած էր որ աշխարհիս հեռաւորագոյն կողմերէն էտիմպուրկ զրկուէին Սիմփսընէ դարմանուելու կամ հրահանգներ ընդունելու նպատակաւ . եւ կամ երբ ուրիշ բժիշկներ իրենց կարողութիւնէն վեր կը գտնէին զանոնք դարմանելու գործը, իբրև վերջին ապաստան մը կը դիմէին Սիմփսընի : Սիմփսընի հետ խորհրդակցելու եւ անոր հրահանգներուն կը դիմէին ոչ միայն կանաչ հիւանդութեանց, որոնք մայրաքաղաքէն քիչ քիչ հեռու հիւանդութեանց համար, ուր անոր պայծառ ուշիմութիւնը, անզուգական փորձառութիւնը եւ զարմանալի հանձարը յոյս կը ներշնչէին :

Կակնկալուէր թէ այսպիսի գերազանց բարձրութիւն մը, այսպիսի մեծարուած նկարագիր մը պատիւներ պիտի ընդունէր թէ՛ հանրութենէն թէ՛ կառավարութենէն : Սիմփսըն թէ՛ երկրին մէջ թէ՛ դուրսը ամենէն երեւելի, ուսեալ եւ գիտնական Ընկերութիւններու եւ Հաստատութիւններու պատուակալ անդամ ընտրուեցաւ :

ՆԻՒՓՐՆՏԼԵՆՏԻ ԾԱՆԾԱՂՈՒՑԸ

Նիւ Եորքի եւ Լիվըրպուլի մէջտեղ բանող շոգենաւ մը Նիւ Եորքէ մեկնելէն երեք շորս օր ետքը Նիւֆրնտլէնտի (Թէն Նէսօվ) ծովեզերքին մօտերը կը հասնի, այնպիսի տեղ մը ուր ջուրը ծանծաղ է, օդը ամպամած եւ միգապատ, եւ ուր միշտ ամբաւ գործ կ'ըլլայ ձկնորսութեան : Այս ծանծաղուտը շատ ընդարձակ է, գրեթէ 400,000 քառակուսի մղոն :

Ինչ է այս ծանծաղուտին պատճառը : Առաւանտեան Ովկիանոսին մէջէն հիւսիսային արեւելեան ուղղութեամբ կը վազէ քանի մը հազար մղոն երկայն եւ իր յիսուն մղոն լայն վիթխարի գետ մը, ժամը շորս հինգ մղոն արագութեամբ : Ջուրը այս գետին որ կը կոչուի Ծոցի Յորձանք, վասն զի ծագում կ'առնէ Մեքսիքոյի Ծոցէն, քանի մը աստիճան աւելի տաք է Ովկիանոսի ջուրէն որուն մէջէն կը վազէ :

Պաթիկէյնի Ծոցին պաղ ջուրէն կը վազէ ուրիշ հոսանք մը որուն ջուրը ոչ միայն շատ մը աւելի պաղ է, այլ իր հետ կը բերէ անագին քանակութեամբ սառ կրօնկանտիոյ եւ Լապրատորի ծովեզերէն :

Արդ երբ այս սառի վիթխարի զանգուածները Ծոցի Յորձանքին կը մօտենան, կը սկսին այդ աւելի տաք ջուրին մէջ հալիլ : Այս հալելու միջոցին այն սառնախեղձներէն զատուող անագին քանակութեամբ հոգեբը եւ ժայռերը ծովը կը թափին : Բանը այսպէս կը շարունակէ ամէն ամառ, եւ այսպէս շարունակած է հազարաւոր տարիներէ հետէ : Ահա այս կերպով ծովուն յատակը բարձրացած եւ ծանծաղուտը ձեւացած է :

Այս ծանծաղուտներէն շոգենաւով անցնողը շատ հաւանօրէն հանդիպած է սառնախեղձներու . եւ գրեթէ ստուգիւ պատահած է Նիւֆրնտլէնտի հոչակաւոր մտածառու շոգենաւը կը սուլէ վայրկեանը կամ երկու վայրկեանն անգամ մը, թերեւս ամբողջ ցերեկը եւ ամբողջ գիշերը, ազդարարելու համար ձկնորսներու եւ ուրիշներու որոնք կրնան շոգենաւին անցնելու ճամբուն վրայ գտնուիլ :

ՅԼԵԿՏՐՈՎԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՈՅՍԵՐՈՒՆ ԱՃՈՒՄԸ

Վերջապէս գործնականօրէն ապացուցուեցաւ մօտերս թէ ելեկտրականութիւնը իրապէս մղում կու տայ բոյսերուն աճմանը: Ասա Ս. Բինի, մասնագէտ երկրագործը, Մասաչուսեցի երկրագործական գոլէճին մէջ կատարած փորձերովն հաստատեց այս իրողութիւնը: Էմօնըսթի մէջ փորձեր տարիներով կատարուեցան, բայց մինչեւ հիմա հասկցուած չէր թէ ելեկտրական հեղուկը օգտակար կրնայ ըլլալ գետնին մէջ ցանուած սերմին բուսեցնելու կարողութիւնը աւելցնելու մասին: Մ. Բինի իր փորձերն ըրաւ երկրագործական գոլէճին բաւարարական աշխատանքներն մէջ: Տարուա սկսելէ Էմօնըսթի տարական հոտանքի մը ենթարկեց, եւ տեսաւ որ բողբոջումը շատ մը արագացաւ: Իւր քաջանչիւրը 112 սերմ պարուակող տասներկու ծրարներէն երկու հատ առաւ, ջուրը խոթեց զանոնք մինչեւ որ աղէկ մը թրջեցան, եւ այն վիճակին մէջ զանոնք մէկ կողմը բաց ապակի սնամէջ գլաններու մէջ դրաւ: Պղինձ սկաւառակներ որ կապակցուած էին ձողերուն հետ, կոխուեցան սերմերուն վրայ եւ անոնց մէջէն ելեկտրական հոտանք մը անցաւ մէկ երկու վայրկեան: Անկէ ետեւ սերմերը ցանուեցան, ջերմութեան առօրեանը 45—50 պահուելով: Արդիւնքն այն եղաւ որ այդ սերմերը փորձի չենթարկուած սերմերուն վրայ հարիւրին 30 շուտ եւ արագ աճեցան:

ԿԵԱՆՔ ԳՏՆԵԼՈՒ ՄԻՋՈՅԸ

Շահ կարողութիւնը (Տր. Հիւսիսի Կարողութիւնը Կարողութիւնը)

«Ան որ իր անձը կը գտնէ, պիտի կորսնցնէ զանկա. և ան որ իր անձը ինծի համար կը կորսնցնէ, պիտի գտնէ զանկա» Մատ. Ժ. 39: Պատմութիւնը պսակած է անձնուրացութիւնը իբրեւ առաքինութեանց մին: Բազմաթիւ չեն անմահներն որոց ծննդեան տարեգարձներն կը տօնէ մարդկային ընկերութիւնը: Երբ այսպիսի տարեգարձներու անթիւ բանաստեղծը կամ ատենաբանը երգի կամ պատմութեան միջոցաւ քօղը մէկգի կ'ընէ եւ համախմբեալ բազմութեան կը ներկայացնէ Կարիպատի մը, Հէմփթընի մը, կամ Լինքոլնի մը դէմքը, կը տեսնուի որ այս պաշտօնեալ անձը հազած է յիշուի հանձար, գեղ եւ ճշմարտութիւն, սակայն նաեւ պսակուած է անձնուրացութեամբ: Մարդիկ կը փութան մոռնալ զնա որ իր մտաց առջեւ ունի միայն իր անձը: Ծիշդ ինչպէս անուս իմաստուն մը, տգէտ Շէյքսփիր մը չկրնար ըլլալ, նոյնպէս պատմութիւնը չճանչնար անձնասէր դիւցազն մը: Յիշողութիւնը վարձքի համար աշխատող ճակատին պսակ չտար: Բոցեղէն սրով պահապան մը համբաւի տաճարին սեմին վրայ կը հսկէ եւ թոյլ չտար որ ներս մտնեն հեշտութիւն, արծաթսիրութիւն եւ անձնասիրութիւն կոչուած թեկնածուները: Համբաւի հարկերը: «Ապագային մէջ պիտի յիշուիմ արդեօք» հարցուց Կարֆիլտ մահուան ժամուն: Այս սրտառուչ եւ թրթռուն հարցումը կ'ընէ ազդողաբար թէ՛ երեւելին եւ թէ՛ աննշանը, քանզի խորհող մտքին համար մոռացումը սոսկալի բան մ'է: Գործիքը զոր մարդ կը չինէ, չենք զոր կը կառուցանէ, յաջողութիւնը զոր ձեռք կը բերէ, ճիշդ իր մարմարեայ շիրմին նման կը նայի մարդոց վրայ համր բողբոջով մը, որպէս զի յիշուի: Բրիտոս կու գայ եւ մեղմ

ձայնով կ'իմացնէ մշտնջենաւոր համբաւի գաղտնիքը ամէն անոնց որ շատ կը բաղձան յաւիտենապէս յիշուելու: Ոչ թէ «մահուի մը», այլ վարդապետի մը նման խօսելով Բրիտոս կը հաստատէ թէ ով որ կ'ուզէ իր անձը գտնել՝ պարտի կորսնցնել զայն, թէ նա որ կ'ուզէ յիշուիլ ուրիշներէ՝ պարտի մոռնալ ինքզինքը: Պայմանները դժուար կ'երեւին: Այս կերպով հեշտութիւնը կը յանդիմանուի, անձնասիրութիւնը հարուած կ'ընդունի, աշխարհի իմաստուններուն սկզբունքները կ'ուրացուին: Բայց Բասվիլէ եւ Լոյոլա, Բրիտոսի սկզբունքներն ընդունելով եւ մուրացիկներու եղբայր ըլլալու համար, իրենց պալատները թողով ստացան զուրկութիւնը: Իւրաքանչիւր անողի որ կը բաղձայ գիտնականին քով աղ մը ունենալ՝ այս խօսքը կ'ըսուի. կեանքը մահու միջոցաւ եւ անմահ համբաւը անձէ հրաժարելու միջոցաւ կը ստացուի: Բնութեան ճշմարտացոյցութիւն: Այս անձնուրացութեան օրէնքը բնական օրէնքն է: Մինո բնախոյզը եւ Տրամբնտ գիտնականը կը պատմեն թէ բՆիլը միայն իր անձը կորսնցնելով կ'ազատէ զայն: Նոր գիտութիւնը կը ցուցնէ թէ մարմինը, տաճարի մը նման կը բաղկանայ բՆիլներէ եւ շինուած է այն ճարտարապետներէն որք կենդանի բՆիլներ կը կոչուին: Երբ գիտնականը թռչունի, կոկոնի կամ կաղինի մը սկիզբը փնտռէ, կը գտնէ միակ բՆիլ մը: Խոշորացոյցով կը տեսնուի թէ այս բՆիլը սնունդ կ'ընդունի իր դրօն կեղեւին միջոցաւ, բայց երբ բՆիլը որոշեալ մեծութեան մը կը հասնի, իր կեանքը յանկարծ վտանգի մէջ կ'իյնայ, իր կեղրոնը այնչափ հեռի կ'ըլլայ կեղեւէն որ այլ եւս անկարելի կ'ըլլայ սնունդ ձեռն գոլբուէն: Գիտնականը կ'ըսէ թէ «բՆիլը պարտի երկուքի բաժնուիլ, կամ մեռնիլ» միայն իր անձը կորսնցնելով եւ երկուքի բաժնուելով կրնայ իր անձը ազատել: Յետոյ երբ երկու բՆիլներուն իւրաքանչիւրը առաջնոյն մեծութիւնը ստացած են, նոյն վտանգը կը սպառնայ իրենց, եւ իրենք եւս պարտին երկուքի բաժնուիլ կամ մեռնիլ: Կեանքը կորսնցնելու միջոցաւ զայն պաշտպանելու այս օրէնքով Բնութիւնը կոկոնի, թռչնոց, անասնոց եւ մարդոց կեանքը ապահովելէն ետեւ անձնուրացութեան սկզբունքը կու գայ եւ իւրաքանչիւր տունկի եւ անասնոց գեղեցկութիւն կու տայ եւ տեսակները մշտակայ կ'ընէ: Պարտեղին մէջ ալ ծաղիկը պարտի իյնալ, որպէս զի պտուղը ուռի: Եթէ փոքր խնձորը պիտի մեծնայ, նախ պարտի ծաղիկը մէկգի հրել, Բայց կոկոնը կորսնցնելով ծառը կը պահէ պտուղը: Հարստութիւն և անյարացոյցութիւն: Անձնուրացութեան օրէնքը նաեւ աշխատասիրութեան օրէնք մ'է: Հարստութիւնը մարդուն կենաց մէջ կը նմանի Նեղոս գետի մը որ կը վազէ եգիպտոսի մէջ, կը ջրէ եւ կ'արգասաւորէ երկիրը, մարդոց բեռը իր հոսանքին վրայ առնելով եւ թռչնոց եւ անասնոց կերակուր տալով: Բայց իւրաքանչիւր Փիթըր Գոլփըրի, Փիպոտի, Էյմըս Լորէնսի պատմութիւնը կը ցուցնէ թէ անոնք այսօր կորսնցուցին կենաց հանգստութիւններն, որպէս զի վաղը կեանք ունենան: Երիտասարդն Փիպոտի կը սիրէր պերճանք եւ գեղեցկութիւն, սակայն ինչոքո՞ր թեան շահու համար ինքզինք կը զրկէր աչքին եւ ճաշակին գոհացում առիլ: Երբ հպարտութիւնը կ'ուզէր ունենալ փառաւոր

հագուստներ եւ ցոյցեր, նա իր փառամուտութիւնը կը զսպէր: Երբ ընկերները կը նախատէին դեռատի վաճառականը՝ կծծի կոչելով զնա, իր զգայնութիւնը կը զսպէր եւ կատարեալ անտեսագիտութիւնով կ'ապեր: Երբ իր հարստութիւնը հեռոզեալէ կ'աւելնար, մարդիկ կը համոզէին զինքը, որպէս զի իր իրիկունները զեղխութեանց նուիրէ: Սակայն դեռատի վաճառականը ընկերութեան այս բնազդը մերժեց եւ ձմեռուան երկար իրիկունները անցուց իր միտքը գիտութեամբ եւ կրթութեամբ զարգացնելով: Վերջապէս եկաւ ժամանակը երբ այս Ամերիկացի վաճառականը ստորին բարիքները կորսնցնելով տիեզերական համբաւ շահեցաւ իր կատարած մեծածախ բարեգործութեանց շնորհիւ: Իր կենաց առաջին կէսին մէջ կորսնցնելով հեշտութիւնը եւ կենաց զուարճութիւններն, երկրորդ կէսին մէջ շահեցաւ լաւագոյն հանգիստը եւ վայելքը: Արեւելեան Հնդկաստանի վաճառականը աքսորեց ինքզինքը Արեւադարձի երկիրները, ուր տաքութիւնը եւ տենդը անոր մորթը դեղնեցուցին շահած ոսկիին պէս: Ուրիշներ Ափրիկէի անտառներուն արհաւիրքներուն զիմարեցին քաջաբար, Աւստրալոյ անապատներուն վտանգներէն չվախցան, Հիւսիսային Բեւեռին ցուրտին խստութեան զիմարեցան, ստորին եւ ներկայ երջանկութիւնը կորսնցնելով գտան լաւագոյն հանգստութիւն եւ զիւրութիւն իրենց զաւակաց համար: Նկարագիր և անյարացոյցութիւն: Անձնուրացութիւնն է նաեւ գաղտնիք գեղեցկութեան, զարգացման եւ նկարագրի: Անձնասիրութիւնը կ'ուտէ երգիչին ձայնին քաղցրութիւնը ճիշդ ինչպէս ժամը կ'ուտէ սուրին բերանը: Սրբուհին Չէչիլիա կը մերժէր իր ձեռքերովն հպիլ գեղխութեան մէջ ընկղմած շրթանց: Լոնտոնի մէջ 50 տարի առաջ երկու երգիչներ երեւցան: Քինադատները միոյն համար ըսին թէ Եւրոպայի մէջ ամենէն անոյ ձայնն ունի: Բայց եթէ իր խազերը արեւին լոյսին նման կակուղ էին, սառի նման ալ պաղ էին: Անձնասիրութիւնը իր խազերուն ներդաշնակութիւնը եւ քաղցրութիւնը գողցաւ, իբր թէ դեւ մը արեւին լոյսին տաքութիւնը գողցաւ եւ միայն ձերմակ լոյսը թողուց: Մինչեւ իսկ քինադատներ միայն մէկ անգամ ունկնդրեցին կատարեալ արուեստագիտուհուոյն, մինչ անձնուրացն ձէնի Լինտ աշխարհի սիրտը գրաւեց: Գեղարուեստի համար ալ Հիլքոք կ'ըսէ. «Երբ վրձինը հեշտասէր ըլլայ, կ'իյնայ երկինքէն հրեշտակի մը պէս» Փրա Անձէլիքա կը մերժէ Փիթի պալատը երթալու հրաւերը եւ աւելի կ'ընարէ իր չոր հացի կտորը եւ յարդէ անկողինը վանառան խուցին մէջ, իր առաւօտները աղքատաց եւ իրիկունները իր նկարին նուիրելով: Սակայն երբ նկարիչը մեկնեցաւ այս կեանքէն, մարդիկ տեսան որ Աստուածային լոյսը կ'երեւէր անոր կտաւին վրայ: Անձնուրացութիւնն է նաեւ գաղտնիք գեղեցկութեան: Զուարճութեամբ եւ անձնասիրութեամբ անցուած կեանքը քիչ ժամանակէն ամենաքաղցր դէմքը աղօտ եւ զգուելի կը դարձնէ, մինչ անձնուէր խորհուրդները գեղեցկարարներ են որ ամենատգեղ դէմքը կը գեղեցկացնեն: Բարոյական թագաւորութեան մէջ ալ հոգւոյն շահերը կը սկսին կորուստով: Ով որ բարձրագոյն պարտականութիւնը կը զոհէ ստորին հաճոյքի, փորձութեան ժամուն պիտի գտնէ թէ հեշտութիւնը Սամփսոնին զօրութիւնը կարեր է:

Իսկ ինչպե՞ս որ Կիւմրուի շինարարները չեն կարողանալ մարդ մը, որ աղքատութեան պատճառաւ անձնասպան եղաւ, թող լով պարտականութիւնը եւ բնակարանը ուր Աստուած դրած էր գինըը, սակայն միւս աշխարհին մէջ, երբ արթնցաւ, տեսաւ որ ճամբայ ելաւ իրեն ուղղակի նամակ մը որով կ'աւետուէր մեծ ժառանգութիւն մը, որ իրը պիտի ըլլար եթէ համբերած ըլլար: Ուստի մեծ վիպասանը կը հաստատէ թէ Աստուած նորէն սկսիլ կու տայ մարդուն կեանքն, զոր իր իսկ ձեռքով ոչնչացուց՝ միայն աւելի դժուար պարագաներու տակ: Հուրիւրը կ'ըսէ թէ Տանիէլ Ուէպսթըր իր կեանքը գտաւ՝ միայն զայն կորստնցնելու համար: Բանաստեղծը իր ընթացքով մէջ կը յիշէ թէ ժամանակ մը երկրի վրայ Ուէպսթըրի նմանը չկար մտաւոր կարողութեան եւ քաղաքագիտութեան համարի կողմէ: Բայց կը կարծէ թէ նա չափէն աւելի տեղի տուաւ Հարաւայնոց նախապաշարունակներուն, նախագահ ընտրուելու ղեկավար: Մարդոց քուէները ստանալու փափակներն համար քիչ մը կորսնցուց անոնց բարձրագոյն յարգանքը, իր վրայ ամէն տեղ զմայլողները գոչեցին: «Ով առտուանց ծագող Արուսեակ, ինչպէս երկինքէն ինկար» Մանուանդ աւելի սրտառու է այն մարդոց որ ղերբգուծիւնը որ այս սկզբունքով շարժելով իրենց կեանքը կորուսած են կրօնապէս: 20 տարի առաջ մարդ մը, հանձարեղ եւ գիտնական, մեծ յարանուանութեան մը առաջնորդը ըլլալու կը ցանկար: Երկար ժամանակ ուսման հետեւելով, բնականաբար յաջողեցաւ իր գաւառները յառաջ տանելու եւ կազմակերպելու: Սակայն իր յարանուանութեան 100ին 60ը պահպանողական էին: Իր եկեղեցւոյն մէջ բարձրագոյն պատիւին ցանկալով որոշեց թողուլ իր զօրաւոր համոզումները եւ այս ստորնագոյնին առաջնորդ ըլլալ: Շուտով եկեղեցական աստիճանի եւ իշխանութեան հասաւ, սակայն բարձր դիրք ստանալով կորսնցուց իր բարոյական առաջնորդութիւնը: Այն մարդիկը, որք իր դրօշին կը հետեւէին, գաղտնապէս իրենց սրտերուն մէջ կ'արհամարհէին զինքը: Սպասեց որ ժողովուրդը իր ծախքով հրատարակէ իր յօրինած գիրքը, սակայն իր յոյսը ի գերեւ ելաւ: Այս սերնդեան վրայ առաջնորդութիւն մը գտաւ, սակայն կորսնցուց ապագայ սերունդներու առաջնորդութիւնը:

Անշուքայութիւն եւ աղքատութիւն: Անձնութեան շինարարները նաեւ գաղտնիք է ազդեցութեան: Շատ ժամանակ առաջ կ'իկերոն զիտողութիւն ըրաւ թէ դիւցազուններու, ճարտասաններու եւ անձնութեանց պատմութիւններ ժողովուրդը կը դիւթեն: Որչափ ազդու էր այն բոլորն երբ Անգլիոյ երեւելիներուն ներկայութեանը Մ. Փիթ կ'աւելաւ եւ առաջարկեց որ իտարգարանը յետաձգուէր որ մը, որպէս զի Շէրիտընի ճարտասանութեան իրենց վրայ ըրած ազդեցութիւնը երթայ: Ուսանողը որչափ կը հիշանայ կարգալով հաստատուելու գործերը որ կը նկարագրեն Ուէպսթըրի ատենախօսութիւնը, ինչ հմայք կայ պատմութեանը մէջ ձոն Պրաունի, որ մահը զիմաւորեց ժպիտով մը եւ կառավարանը ելլելու պահուն վար ծոցեալ համբուրելու խափշիկ մանուկ մը: Երբ մարդ կը գոհ է հանգիստ, հարստութիւն, աստիճան, նոյն իսկ կեանքը, զինքը զիտողներուն հրճուանքը չափ չունի: Եթէ մեծութեան եւ աղ-

ղեցութեան որդիներուն ցանկը աչքէ անցընենք, պիտի տեսնենք թէ անոնք էին նաեւ անձնութեան որդիներ: Մեր կարողութեան վեր է արժան կղած կերպով պատմել նոցա կատարած գործերը: Հոս յիշենք թէ Արամազդի արձանը այնչափ հսկայ բարձրութիւն էր որ զայն պաշտողները անկարող ըլլալով հասնիլ աստուածային ճակատին՝ իրենց պսակները արձանին ոտքը կը դնէին, քանզի այս անձնութեան օրէնքը Մեսիային գաղտնիքն է: Երկրի մեծերը սորվեցան ասիկա իրենց Տէրոջմէն, Յիսուս Գրիստոսէ, որ «ինքը մեզի համար աղքատ եղաւ՝ ան որ հարուստ էր»: Անձնութեան օրէնքը Փրկչին օրէնքն է, մարդ կեանք կը դնէ մահուան միջոցաւ եւ համբաւ՝ անձէ հրաժարելով:

ՎԵՐԳԻՆԱ Ս. ՎԵՐԳՍՅԵՏԱՆ
 ՀԱՒԱՏԻՈՐԻԿ
 2.
 (Միջրան Յ. Գաբրիէլեան)

Սրովհետեւ, ինչպէս ցուցինք, Հաւատաւորկցին քիչ հող ունի, լոկ հողամշակութիւնը բաւական արհեստ պիտի չըլլար իրենց զինք ապրեցունելու: Ասոր համար հողամշակութեան հետ խաշնապահութեամբ ալ կը պարագլի, որպէս զի ինչ որ երկրագործութեան պակաս մնայ՝ խաշնապահութեամբ լրանայ: Պարագային հետ տեղն ալ կ'օգնէր եւ կը ստիպէր զինքն առ այդ: Այնչափ ընդարձակ մացառուտներ, լեռներ եւ արօտներ իր բոլորտիքն ունեցող ժողովուրդ մը ատոնցմէ օգտուելու համար բնական էր որ խաշնք պահէր: Իսկ աս բնական պատճառին վրայ կ'աւելնայ Հաւատաւորկցւոյն խաշնապահութեան համար ի նախահարց ժառանգած հակամիտութիւնն ալ: Սասունցիք, որոց որդիքն են Հաւատաւորկցիք, իրենց լեռնուտ եւ անտառուտ երկրի բնական բերամբ ի հնուց խաշնարած եւ խաշնապահ են եղած: Որդիքն ալ որ անոնցմէ բաժնուեցան եւ հոս գաղթեցին՝ անոնց արհեստին հետեւեցան: Իրենց պատմածին նայելով՝ գաղթելու ժամանակ դաշտին վրայ անտէր, անմշակ, բայց շատ բերրի եւ ընդարձակ հողեր կան եղեր զորս կառավարութիւնը ձրի՝ առանց զնոյ՝ հրամցուցած է իրենց, բայց ընդունած եւ այն տեղերը հաստատուած չեն: Իրենց լեռնցիութիւնը լեռնաէր ըրած է զիրենք եւ լեռնասիրութիւնն ալ որոշել տուած որ հոս լեռան վրայ բնակին, լեռը դաշտին նախընտրեն: Հիմա կ'ափոսան իրենց այս ընտրութեան համար: Սակայն իրենց զիւրակեցութիւնը դաշտեցու զիւրակեցութեան պակաս չէ, եթէ աւելի ալ չէ, այնպէս որ առ այժմ փոստալու տեղի չկայ կը թուի ինձ: Բայց մէկը հարցնէր՝ ինչ է դաշտեցու զիւրակեցութիւնը եւ ինչ Հաւատաւորկցու զիւրակեցութիւնը. երկուքն երեք վայ պիտի ըսէի ըստ Տաճկերէն առածին:

Սաշնապահութիւնը, որով եւս կը պարագլի Հաւատաւորկայ ժողովուրդը, ըրած է զայն կէս հաստատուն կէս վաչկատուն ժողովուրդ մը: Տարւոյն կէսը (ձմեռը) զիւրը քարէ փայտէ շինուած տանը մէջ կ'անցունէ նա, եւ միւս կէսը (ամառն եւ աշունը) լեռներու վրայ եղէգնէ հիւսած կամ կազմուած վրաններու, տեղացւոց բառով, կ'անցունէ մէջ: Այս բառը Գրգական է անշուշտ եւ ոչ Հայկական կամ Հայերէն: Ամէն տուն ունի (աւելի ճիշդ ունէր, զի հիմա շատեր չունին եւ ունեցողներուն ալ նուազած է աղքատութեան գործիւն աղաքաւ) հօտ մը: Գարուն գալուն եւ դեռնիները բաց-

ուելուն՝ հօտը դուրս կը հանուի, լեռը կը տարուի: Այդ տանէն սկսեալ կ'օնորը կը սկսին գործածուիլ: Լեռներուն վրայ, գիւղէն հեռու, շատ հեռու (երբեմն մինչեւ 5-6 ժամով հեռու) պաղ աղբւրներու, ճոխ արօտակներու ըով կը հաստատուին կ'օնորը: Ինչպէս ամէն մարդ ունի իր հօտը՝ ունի նաեւ իր արօտները, իր մացառուտը, իր աղբւրները: Հօտերը կ'երթան կը շրջին անոնց մէջ, կ'ուտեն կանանչ կակուղ խոտերէն, կը խմեն պաղ ու սառն կաթնաղբւրներէն, եւ օրը երկու անգամ՝ կէսօրին եւ իրիկուն՝ ծիծերին պատուելու, ճաթելու չափ լցած կաթով կու դան կ'օնորուն մօտ, կու տան կաթերին կ'օնորու կնիկներուն ու կրկին կ'երթան կաթ շինելու: Միշտ ձեան հետքին կը հետեւին: Ուր որ ձիւնը նոր կը հալի, նոր գարուն կը լինի, նոր ջրեր կը բղխին, նոր խոտեր ու ծաղիկներ կը բուսնին եւ կը ծղին՝ հոն կ'երթան: Կ'երթան ի կոնկուր, մերձ ի Մովսսար վայր մը:

Իսկ ծովասարը վայր մ'է ուր ամէն բան, Աստուածային ամէն բարիք — ջուր, ձիւն, խոտ, ծաղիկ, անտառ, թըռչուններ եւ կենդանիներ ծով են, ծովացած են այդ լեռան սարին վրայ: Տեսած չեմ դեռ, բայց ինչպէս կը պատմեն, այդ վայրերը անմահներու վայել են, անմահութեան բնագաւտներ են: Մահկանացուն ալ որ հոն կ'երթայ՝ քանի հոն մնայ, մահ չտեսնայ: Անոր նկարագրութիւնը առնելու չէ բանաստեղծի մը գրչէն, այլ Հաւատաւորկցի մը բերնէն: Անոնք ծովասարի նկարագրութիւնն ընելու մէջ քան զբանաստեղծս բանաստեղծ են: Անոնք են որ կ'ըսեն. «Ով հոն երթայ Երեմի տեսնայ, ո'վ հոն երթայ կ'անմահանայ, ո'վ հոն երթայ նոր կը գիտնայ՝ Աստուած ինչպիսի Աստուած է, ինչ գորութիւն ունի, ինչ իմաստութիւն, ինչ բաներ ստեղծեր է, եւն. » Այլօք մէջ իսկ կը յիշեն զծովասարն: Անգամ մը Սըճօն էր կարծեմ այսպէս աղօթեց. «Ով Ամենակարող Աստուած, Ստեղծող ամէն սքանչելիներուն, ծովասարին ու ծովասարի ծաղկներուն, քեզմէ կը բղխին ամէն բարութիւն ու գեղեցիկութիւն, ինչո՞ւ մեղքը զմեզ այնչափ աղտոտած է որ մենք կարծես արարածոց ամենէն տեղը, ամենէն պիղծն ու անպիտանը եղած ենք, թէեւ դու ստեղծեցիր զմեզ վր՝ էնոնց ազնիւ, աղու որ ու թագաւոր: Սրբելով մեզ Գրիստոսի արիւնով, նորէն մեզ մեր առջի վիճակին դարձուր: »

Ոչխարի պահպանութիւնը շատ չափահաս է Հաւատաւորկցւոյն: Ոչխարը անոր համար ամէն բան է: Անոր բուրգէն կը ստանայ իր հագուստը: Ամառ ու ձմեռ իր ուտելիքը անոր իւղն է, կաթն ու մածոնն է, երբեմն ալ միսը: Իւղին, կաթին եւ մածոնին տարբեր ձեւեր տալով՝ զայնս կ'ընէ հաստատուն սպառ ու կը պահէ ձմրան համար: Այնչափ շատ կը ստանայ անոնցմէ որ մեծ մաս մ'ալ կը ծախէ եւ ուրիշ ծախսերու համար դրամ ձեռք կը բերէ: Եթէ այդ ճամբով չկրցաւ ձարել արտաքին ծախուց համար հարկաւոր դրամը, մեծ ցաւով կը ծախէ իր ոչխարը: Վերջին տարիներու մէջ ոչխարը միշտ կը քիչնայ եւ Հաւատաւորկցին շատ տխրութեամբ կը դիտէ այդ երեւոյթը: Ցաւալի կը գտնէ ներկայ եւ մուրթ՝ ապագայն, վասն զի եթէ ոչխարը լիննայ, ալ Հաւատաւորկցուն ինչ կը մնայ, «Ինչ ապրիլ» որպէս սովոր են ըսել իրենք:

Երիտասարդաց կիրակնօրեայ աղօթքի ժողովը կը սկսի ժամը Տին (Ը. Թ.) Պայպը Հաւաւի մատրան մէջ:

ՀԱՆԴԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Յուլիս 3 ըստ Յուն., եւ Յուլիս 15 ըստ Լատ. 1897

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ֆրանսա. Այս շաբթու ֆրանսա զբաղ է տօնախմբութեամբ իր ազգային տօնին որ տեղի կ'ունենայ Յուլիս 14ին: Երկուշաբթի ֆարիզի մէջ տեղի ունեցաւ Օթէլ տէ զինվարի տորաշէն զինուորական պատմական թանգարանին պաշտօնական բացումը: Երեքշաբթի ֆարիզի մէջ Սէն գեաին վրայ ֆոն Միոնապօ տնուկով նոր կամուրջ մը բացուեցաւ, նաեւ Ռիւ տը լա Գոնվանսիոն տնուկով նոր փողոց մը: Չորեքշաբթի, ազգային մեծ տօնին օրը (երէկ), տեղի կ'ունենայ մեծ զօրահանդէս մը ի Լոնշան, ուր նախագահ Մ. Ֆոռ ներկայ պիտի գտնուի: —Մ. Ֆոռ որոշեր է՝ Ռուսիա չուղեւորած՝ տասնօրեայ պտոյտ մը ընել ֆրանսայի հարաւային եւ արեւելեան մասին մէջ: Այդ պտոյտին առթիւ ներկայ պիտի ըլլայ Սափուա գաւառին Ալպեան զօրաց ուղւմափորձերուն: —Հինգշաբթի Մ. Պուայեէ Երեսփոխորդին մէջ կարգ մը հարցումներ ըրաւ նախարարութեան աշխարհավարութեան նըկատմամբ, մանաւանդ թուրքիոյ եւ Յունաստանի միջեւ կնքելի հաշտութեան բանակցութիւններուն նկատմամբ: Այս հարցումներուն նկատմամբ խնդրոյն հակառակեցան թէ՛ վարչապետ Մ. Մէլլին եւ թէ՛ Արտաքին գործերու նախարար Մ. Հանթօ: Վերջապէս խնդրին յետաձգուեցաւ 20օր դէմ 314 քուէով: Հաւանօրէն նկատողութեան պիտի առնուի նորէն, երբ վիճարանութիւն տեղի ունենայ ֆրանսայի արտաքին աշխարհավարութեան վերաբերեալ պաշտօնագրեր պարունակող նոր Դեղին Տետրակին առթիւ, զոր արդէն Արտաքին գործերու նախարարն հրատարակած եւ Խորհրդարանի անդամներուն բաժնած է: —Քանի որ կը մօտենայ Մ. Ֆոռի ի Ռուսիա ուղեւորութեան ժամանակը, ֆրանսայի մէջ աւելի յոյսեր կ'արծարծուին այդ ուղեւորութեամբ շահուելու արդիւնքներուն նկատմամբ: Երբեք նշան մը չկայ որ ցուցնէ թէ այդ այցելութիւնը քաղաքավարական այցելութենէ մը տարբեր պիտի ըլլայ կամ ոեւէ մասնաւոր կարեւորութիւն պիտի ունենայ: Սակայն ֆրանսական թերթերն այժմէն այնպէս կը խօսին որպէս թէ այդ դէպքը ամենէն մեծ կարեւորութիւնը պիտի ունենայ: —Կարոնի հովտին մէջ հեղեղներէն յառաջ եկած ձիւսը շատ մեծ եղած է: Ֆրանսական Երեսփոխորդը 7,000,000 ֆրանքի վարկ մը քուէարկեց օգնելու համար այդ եւ ուրիշ նմանօրինակ աղէտներէ ձիւսուածներուն: —Ֆրանսական թերթերը քանիցս հրատարակեցին թէ Միամցիները ապօրինութիւններ կը գործեն ֆրանսական Միամի սահմանազլիին վրայ: Բաւական ալ զայրոյթ յայտնուեցաւ ֆրանսական նախարարութեան դէմ՝ զինուորութեամբ միջամտելով այդ անկարգութիւնները չպատժելուն եւ չարգելելուն համար: Այս բոլոր բաներէն ետքը վերջապէս ֆրանսական կառավարութիւնը պաշտօնապէս զեկոյց թէ այդպիսի անկարգութիւններ պատահած չեն, եւ թէ այդ մասին հրատարակուած բոլոր լուրերը սուտ եւ չինձու են: —Յուսալի է որ Խորհրդարանին նստաշրջանն այս շաբթու փակուի: —Փանամայի գայթակղութեան խնդիրը քննող յանձնախումբը նամակ մը ստացաւ սեղանաւոր Գոննէլիուս Հէրցէ, որ ժամանակաւ

Փանամայի ընկերութեան մէջ էր եւ երկարատեւէ ի վեր Անգղիա փխտած է Ֆրանսական ոստիկանութեան ձեռքը չիյնալու համար: Նամակագիրը կը խոստանայ յանձնաժողովին կարեւոր յայտնութիւններ ընել, եւ կը խնդրէ որ իր վկայութիւնն առնելու համար պատուիրակութիւն մը զրկուի: Հաւանօրէն այս խնդիրը պիտի ընդունուի: Յոսանքաւ. Անցեալ երեքշաբթի Պիլէսնի մէջ Ռուսական նաւազներ եւ Յոյներ կ'սիւ մը ունեցան: Կոնքը շուտով խոսվութեան փոխուեցաւ, եւ երկու կողմէ ալ քանի մը անձեր ծանրապէս ձիւսուեցան: Ռուս սպայ մը, որ միջամտեց՝ կողմն վերջ տալու նպատակաւ, քանի մը վէրք առաւ: Սակայն յետոյ խնդիրը կարգադրուեցաւ: Յունական վարչապետ Մ. Ռալի անձա մը Ռուսական մարտանաւին հրամանատարին գնաց իր ցաւն յայտնել այդ դէպքին համար, եւ Յունական կառավարութիւնը 21 թնդանօթի արձակմամբ ողջունել տուաւ Ռուսական զօրը: —Յունական կառավարութիւնը հաշտութեան բանակցութիւններուն երկարաձգման համար ցաւ յայտնեց ըսելով թէ մեծ ծախքի ենթարկուած է բանակ մը պահել հարկադրուելով: Եւրոպական պետութիւններն ալ Յունաստանի խրատ տուին արձակել իր պահեստի զօրաց մէկ մասը: —Տակաւին զրոյցներ կը շըլին թէ երեւմտադէտներու կողմէ Յունաստանի զանազան առաջարկներ եղան դրամ տալու, որպէս զի թուրքիոյ վճարէ պատերազմական տուգանքը: Չորոյց մը կ'ըսէ թէ կարգ մը դրամատէրներ պատրաստ են դրամ տալ ծխախոտէ եւ զրոյցմաթուղթէ զատ կառավարական ամէն մենաշնորհ գրաւ առնելով: Ուրիշ զրոյց մը կ'ըսէ թէ Անգղիացի եւ Ֆրանսացի սեղանաւորներու խմբակ մը պատրաստ է տուգանքին վճարումը երաշխաւորելու, պայմանաւ որ գրաւ տրուին Յունական մաքսային հասոյթները, եւ առնք նոյն խմբակին հսկողութեան ենթարկուին: Սակայն անհաւանական է որ այս առաջարկներէն ոեւէ մին իրագործուի: Սպանիա. Մատրիտի մէջ մեծ խանդավառութեամբ ընդունուեցաւ Ճափոնական արտաստվոր պատուիրակութիւն մը: Սպանիական թերթերը կը ցուցնեն թէ Ճափոնեւսպանիական զինակցութիւն մը յոյժ կարեւոր է միասնաբար ընդդիմանալու համար Ամերիկայի Միացեալ Նահանգներուն ոտնձգութիւններուն: —Կիրակի Մատրիտէ հեռագրուեցաւ թէ Քուպայի Սպանիական զօրքերը մեծ յաղթանակ մը տարած են Կոմէզ ապստամբապետին մարդոց վրայ: Կ'ըսուի թէ ապստամբները կորուսած են 54 մարդ եւ 444 ձի, նսու իրենցմէ 347 հոգի դերի ընտուած են: Միացեալ Նահանգներ. Քանի մը որ առաջ ծանուցուեցաւ թէ Ճափոնի եւ Միացեալ Նահանգներու զիւանազիտական յարաբերութիւնները խղուած են: Այս լուրը բոլորովին ճիշդ չէ, վասն զի Ճափոնի դեսպանը դեռ Ուաշինկթընի մէջ կը մնայ: Երկու պետութիւններուն յարաբերութիւնները սակայն այնպէս ձգտուած են որ Ճափոնի դեսպանը միայն գրաւորապէս կը հաղորդակցի Ամերիկեան կառավարութեան հետ, այն ալ միայն պաշտօնական գործի առթիւ: —Մաքսային նոր սակացոյցը Ամերիկեան Ծերակոյակէն ընդունուեցաւ 28ի դէմ 33 քուէով: Սակացոյցը Երեսփոխորդին ընդունուելէն ետեւ բարեփոխուած ըլլալով հիմա կը յնուի խառն յանձնախմբի

մը, Խորհրդարանի երկու ժողովներուն կողմէ ընտրուած, որոնք պիտի ջանան իրաւաստութեան կամ համաձայնութեան եղանակ մը գտնել: —Ամերիկեան Ծերակոյցը, Միացեալ Նահանգներու հասոյթն աւելցնելու նպատակաւ, ի մէջ այլոց՝ տուրքի ենթարկած է Սակարանի մէջ բաժնետոմսերու եւ պարտաթուղթերու ամէն վաճառումները: —Ամերիկայի երկրագործները շատ ախուր են: Ներդրութիւնը սակայն հունձքերուն անյաջողութենէն չէ, այլ անոնց արտաստվոր առատութենէն, որով զինները կոտրած են: Կ'ենթադրուի թէ այս տարի Միացեալ Նահանգներու ցորենի հունձքը 559,000,000 գրիւ պիտի արտադրէ: Ասպրի. Կայսրը Իշէ Վիէննա վերադարձաւ Պոնտիական խնդրոյն վրայ Պատէնի կոմսին հետ խորհրդակցելու համար: Պատէնի կոմսին ըսաւ թէ կը բաղձայ խնդիրը լուծել որչափ կարելի է շուտով, եւ թէ ինք պիտի հաւանի ոեւէ անօրինութեան որով գոհացում տրուի Պոնտիոյ ժողովրդին արդար պահանջումներուն: —Արտաքին գործերու նախարար Կոլուսոլուքի կսմար ֆարիզ պիտի երթայ: Իտալիա. Ընկերվարական Մ. Չիփրիանի, որ պատերազմին առէն Յունաստանի ծառայեց եւ Տոմոքոսի ճակատամարտին մէջ վիրաւորուեցաւ, յետոյ Իտալիա վերադարձաւ: Քիչ ետքը իր քաղաքացիներուն կողմէ Խորհրդարանի անդամ ընտրուեցաւ: Բայց Իտալական Խորհրդարանը անոր եւ անոր ընտրողներուն խանդավառութիւնը մարեց չընդունելով անոր ընտրութիւնը: —Տակաւին զրոյց կայ Իտալիոյ մէջ թէ Չարը յառաջիկայ աշնան Իտալիա պիտի երթայ այցելել Ումպէրթօ թագաւորին: Անգլիա. Հապէշաստան զրկուած Անգղիական պատուիրակութիւնը Անգղիա վերադարձաւ: Մր. Քըրզըն Խորհրդարանին մէջ ծանոյց թէ, հրատարակուած բոլոր զրոյցներուն հակառակ, այդ պատուիրակութիւնն յաջողած է առեւարական դաշնագրի մը համար բանակցիլ Մենելիք Կայսեր հետ: Սակայն հաւանական կը թուի որ այդ պատուիրակութիւնը, առեւարական դաշնագրի մը վերաբերեալ բանակցութենէն զատ, զիտաւորութիւն ունէր սահմանազլի խնդիրը բանալու, եւ այդ մասին չհասաւ իր նպատակին: —Արեւելեան գործերու վրայ նոր Կապոյտ Տետրակ մը հրատարակուեցաւ եւ օրինակները Խորհրդարանի անդամներուն բաժնուեցան: —Երեսփոխորդի յանձնախումբը, որ կը քննէ Թրանսվալի Անգղիական արշաւանքին պարագաները, գտաւ թէ պատասխանատուութիւն կը ծանրանայ Սըր Սէսիլ Բոտտի վրայ, որ այն դէպքին առէն (Դեկտ. 1895) Հարաւափրիկեան կառավարութեան առաջնակարգ պաշտօնատէրէն էր: —Անգղիական Խորհրդարանը ծրագիր մը ընդունեցաւ որով կ'ընտրուի եւ չափերու մեթրական զրուութեան ներմուծումը կ'արտօնուի Անգղիոյ մէջ: Դերմանիա. Մինչ Դերմանիոյ Կայսրն իր Հինջոլըն զբոսանալով կ'ուղեւորէր դէպի Հիւսիսային Հրուանդան, նաւուն պարաններուն եւ առագաստակալներուն մէկ մասը կայմերէն գատուելով ինկան տախտակամածին վրայ՝ Կայսեր ձախ աչքին զարուհելով եւ թիթեւ վէրք մը պատճառելով: Այլապէս. Ռուսմանիոյ Ֆերաինանտ իշխանին առողջական վիճակը նորէն սկսաւ բարւոքիլ: Պուքէշէ Սինայայի արքայական ամարանոցը փոխադրուեցաւ: —Մոն-

Թեանկրոյի գահաժառանգ Տանիւօ իշխանը Սբ. Փետրարսպուրկ գնաց: Կ'ըսուի թէ նպատակն է Ռուսիոյ իշխանուհիներէն մէկուն հետ նշանուիլ: — Սերպիոյ Սքուփիչինային նստաշրջանն սկսաւ ամսոյս 11ին: Արմատական կուսակցութիւնն յոյժ ստուար մեծամասնութիւն մը կը կազմէ Խորհրդարանին մէջ: — Սիւսի Թագաւորը Մոսքուա եւ Սբ. Փետրարսպուրկ երթալէ ետեւ Սթոքհոլմ գնաց այցելել Օսքար Թագաւորին: Անտի պիտի երթայ Անգլիա: — Կալաց քաղաքին ցած կողմերը տակաւին ջրով ծածկուած են: Գոյքերու վնասը շատ մեծ է, 20,000 անձեր անպատուար կը մնան:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ուրբաթ օր Սէլամըզի արարողութիւնէն ետեւ, Յրանսական դեսպան Մ. Քանպոն, յետոյ Գերմանական դեսպանատան առաջին քարտուղար Տոնըրսմարք կոմսը, պատիւ ունեցան Վեհ. Սուլթանին ներկայանալու մայրաքաղաքէս իրենց մեկնելուն առթիւ:

Կիրակի Ռուսական դեսպան Մ. Ճուվարա պատիւ ունեցաւ առանձինն Վեհ. Սուլթանին ներկայանալու:

Յրանսական դեսպան Մ. Քանպոն այսօր Վիէննա կ'երթայ իր ամուսինը հանքային ջուրերը տանելու:

Գերմանական դեսպանատան առաջին քարտուղար Տոնըրսմարք կոմսը Լիւքսէմպուրկ կ'երթայ իբրեւ Գերմանական դեսպան տեղւոյն:

Ռուսական դեսպան Մ. տը Նէլիտով արձակուրդ ստացաւ: Հաւանօրէն Վիէննա պիտի երթայ ամսոյս վերջերը:

Միւսիք փաշա եւ Վիքթորիա Թագուհի լոյն յորհրանին առթիւ Լոնտոն զրկուած միւս պատուիրակները կիրակի մայրաքաղաք վերադարձան Բէօթէնձէի թղթատար շոգենաւով: Միւսիք փաշա Ռուսականայէ անցնելու պահուն յատուկ հրաւիրմամբ Ռուսանիոյ Թագաւորին ու Թագուհի լոյն այցելութիւն տուաւ անոնց Սինայայի պալատան մէջ:

Պետական Խորհրդոյ անդամ Էնիս փաշա Գասթէմուռնի կուսակալ անուանուեցաւ:

Հաս Իֆթարի, Վեհ. Սուլթանին հրամանաւ պատուոյ թուրքեր կը պատրաստուին, որոնք Ն. Կ. Վեհափառութեան կողմէ պիտի նուիրուին Միւսիք փաշայի եւ Թեսալիոյ եւ Եանեսայի զօրաբաժնի հրամանատարներուն:

Սէլանիկի մէջ Թեսալիոյ բանակին պիտոյից հայթայթման համար նոր պայմանագրութիւններ կնքուեցան, եւ հիմա Սէլանիկէ մեծ քանակութեամբ պաշար կը ՂԵՐԿուի Էլասոնայի, նաեւ Վոլոյի ճամբով:

Բեաթիլիա շոգենաւը անցեալ շաբթու վոյրէ 180 հիւանդ զինուոր բերաւ Թեսալիան բանակէն: Գոյալի շոգենաւն ալ կրեալէ հիւանդ զինուորներ բերաւ: Ապր 47 վիրաւոր բերաւ Փրէվէզայէ: Իբր 1,500 հիւանդ զինուոր կայ Թեսալիոյ հիւանդանոցներուն մէջ: Կարգադրութիւններու ձեռնարկուած է անոնց մէկ մասը Տարտանէլ բերելու եւ հոն զանոնք դարմանելու համար: Ելլողըի եւ Կիւմիւլչուի հիւանդանոցներուն վիրաւորներն ընդ ամենայն 84 սայլ եւ 1,941 զինուոր են: Ասոնց 1,048ը հիւանդանոցներէն ելած են ապաքինելով: Վեհ. Սուլթանը հրամայեց որ վիրաւոր սպաններուն եւ զինուորներուն կրկին ամուսական վճարուի: Անգլիական Կարմիր Խա-

չի Ընկերութիւնը դարձեալ հագուստ եւ ուրիշ բաներ զրկեց Օսմ. վիրաւոր զօրքերուն: Երեւելի Եգիպտացի մը եւս 54,000 տուփ ծխախոտ նուիրեց անոնց: Օսմ. Կարմիր Մահիկի Ընկերութիւնը այս շաբթու հիւանդանոցի բաւական պիտոյք կը զրկէ Վոլո Թեսալիան բանակին համար:

Թեսալիոյ հունձքը քաղուեցաւ եւ շատ առատ է, կ'ըսուի: Թեսալիան գաւառներու տասանորդները աճուրդի հանուած են գանձուն նպաստաւոր պայմաններով:

Անգլիական, Ռուսական եւ Իտալական դեսպանատուներու քարտուղարները, որ Թեսալիա ուղեւորեցան կարգ մը հետազոտութիւններ կատարելու նպատակաւ, աւարտեցին իրենց գործը եւ Եանեսայի նահանգը անցան:

Արեւելեան երկաթուղեաց ընկերութիւնը վերջապէս նորոգեց հեղեղներէն վնասուած գիծերը, եւ շաբաթ օր վերսկսան ձեպընթաց եւ պայմանադրական կառախումբերուն երթեւեկները: Միայն մէկ տեղ կը մնայ տակաւին չնորոգուած, այն է Սթալացի Սերպիա, ուր ուղեւորները եւ թղթատարական ծրարները մէկ կառախումբէն միւսը կը փոխադրուին: Բայց այս գործողութեան համար շատ քիչ ժամանակ վը վատուի:

Սյոքնի նահանգին գարիի հունձքը շատ լաւ կը թուի այս տարի: Ափրոնի հունձքն ալ աղէկ է: Ումանք կը հաշուեն թէ 10,000 սակառի պիտի հասնի:

Ուրբաթ Պուկարիոյ Տէրտինանտ իշխանը, վարչապետ Մ. Սթոյուլի եւ պատեւարգմական նախարար Մ. Իվանովի ընկերակցութեամբ, Հոռոմ հասաւ: Ումպէթթօ Թագաւորը շատ սիրալիր ընդունելութիւն մը ըրաւ: Շաբաթ օր հացկերոյթ տուաւ ի պատիւ իշխանին եւ Աւետեաց պատուանշանը տուաւ: Մ. Սթոյուլի եւ Մ. Իվանովի ալ պատուանշան շնորհեց: Կիրակի իշխանին ընկերացաւ մինչեւ երկաթուղոյ կայարանը, ուրկէ իշխանը ուղեւորեցաւ Վիէննա եւ Պուքրէշ: Պուկար Թերթեր մեծագոյն կարեւորութիւնը կ'ընծայեն Իտալիոյ Թագաւորին կողմէ իշխանին ցուցուած սիրալիր պատիւներուն: Մ. Սթոյուլի Հոռոմէ Սոֆիա վերադառնալէն ետեւ սա դիտողութիւնն ըրաւ թէ Պալքանեան Թերակղզոյն խաղաղութիւնն ապահովուած է:

Ինէպուրէ կը տեղեկագրուի թէ երկու երեք շաբաթ առաջ տեղացած յորդ անձրեւները բաւական վնաս գործեր են քաղաքին մէջ եւ շրջակայքը: Լեռնային վտակներուն յանկարծակի յորդելէն 4 խան, 4 սրճարան եւ 16 խանութ քշուեր տարուեր են: Տանսերկու նաւակ ալ ցամաքէն բացուեր քշուեր են: Շուկաներն ալ ողողուեր են եւ հինգ մարդ խեղդուեր են:

Իդմիրի եւ Չէշմէի մէջ հաւաքուած Բուսնէք զօրքերն արձակուեցան, որպէս զի իրենց տեղերն երթան հունձքի գործեր կատարելու:

Չինուորական հաստատութիւններու համար հանգանակուած գումարն 576,643 ոսկւոյ հասաւ, եւ ասոր միայն 201,863 ոսկին ծախսուած է մինչեւ ցարդ:

Վնասը, զոր Գոսովայի նահանգին Օսմ. հպատակները կրեցին Յունական պատերազմին բերմամբ, 250,000 ոսկի կը հաշուուի: Այս հաշուին մէջ առնուած է ապրանքի եւ ուրիշ գոյքերու կորուստը, նաեւ առեւտուրի զաղարման եւ պահեստի զօրացի զէն կոչման պատճառաւ կրուած անուղղակի վնասը:

Շաբաթ Թարապիոյ նաւամատոյցին մօտերը քարափին վրայէն ձիով անցնող սատիկան մը ջուրն ինկաւ ձիուն հետ մէկտեղ եւ խեղդուեցաւ: Ձին սակայն յաջողեցաւ ազատիլ եւ ցամաք ելլել:

Պրուսայի եղեռնագատ տետանը 15ամեայ տաժանակիր աշխատութեան դատապարտեց երկու Հայեր որոնք Պողոս անունով մարդ մը սպաննած են:

Կրեաէի օտար զօրքերն անցեալները կարճ պտոյտներ ըրին այն քաղաքներուն ետեւները ուր հաստատուած են իրենք: Ապլուտամբերը վերջերս կրակ ըրին Աւստրիական զօրաց գումարտակի մը վրայ որ Հանեայէ Փլաթանիա կ'երթային: Յետոյ ներում խնդրեցին ըսելով թէ իրենք չհասկցան առնոց շարժման նպատակը: Սակայն ծովու կալները չընդունեցան անոնց այս բացատրութիւնը եւ ապստամբներուն իմացուցին թէ ասկէ ետքը անմիջապէս եւ խստիւ պիտի պատժուին օտար զօրաց վրայ յարձակողները: Ապստամբները եւ Քանտիայի Մահմետական բնակիչները քանի մը ընդհարումներ ունեցան վերջերս: Այդ պատճառաւ Թուրք զօրաց երկու խումբեր Հանեայէ Քանտիա զրկուեցան անդորրութեան վերահաստատման օգնելու համար: Յունաստանէ բաւական թուով մարդիկ, ըսելով թէ իրենք Կրեաացի են եւ կ'ուզեն իրենց տեղերը վերադառնալ, փորձած են նաւերով Կրեաէ երթալ: Եւրոպական ծովակալներն ալ միջոցներ ձեռք առած են որպէս զի այդպիսիներու թոյլ շարուի Կրեաէ մտնել, եւ Աթենքի օտար դեսպանները պնդած են որ Յոյն կառավարութիւնն հոգ տանի արգելել այդ խմբակներուն մեկնումը: Կրեաէի կուսակալի փոխանորդ Իսմայիլ պէյ կը ծանուցանէ թէ Հանեայի, Քանտիայի եւ Ռեթիմոյի կարօտ Մահմետականներուն ի նպաստ 2,150 պարկ ալիւր հասած եւ բաժնուած է:

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ

Յրանսական Դեղին Տետրակը կը յայտնէ թէ Գերմանիոյ Կայսրը երկու անգամ առաջարկած է պաշարման ենթարկել զՅունաստան, եւ երկու անգամուն ալ Անգլիա չէ հաւանած մասնակցիլ այդ գործողութեան:

Չարն հրամանագրով մը Ռուսիոյ գործաւորներու օրական աշխատութեան տեւողութեան սահման մը դրաւ: Օրը 11½ ժամ պիտի գործեն եւ կիրակի եւ տօնական օրեր անոնց արգելեալ է աշխատիլ:

Երեքշաբթի Տանիմարքայի մէջ Քոփէնհակի մօտերը երկաթուղոյ սոսկալի ընդհարում մը պատահեցաւ: Կ'ըսուի թէ այդ արկածին 100 մարդ զոհ գացած է:

Հապէչաստանի Մենելիք կայսրը Հապէչաստանի հարաւարեւմտեան նահանգներուն կուսակալ կարգած է Ռուս Լէոնիթիլ գնդապետը:

ԳՐԱՄԱԿԱՆ			
Յուլիս 3/15, 1897			
Գոնուրիտէ			23 22
Բուսնէլի Երկաթուղի			107 50
ԳՐԱՄ. ՕՍՄ. ՈՍԿԻՆ 100Է			
Մէճիտէյէ	108 48	Թուսիոյ ըՈՂ	90
Մէթալիք	97 30	Նաւոյէն	87 40
Պէշիք	103	Գրեթից	51 5
Ալթըլէշ	103 40	Անգլ. ոսկի	109 35
Մանր արծաթ	103 40	Մանէթ Թղթ.	8 57

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆ Ա. ՅԱՅՈՒ ՊՅՅԱԵԱՆ
Ֆիւնիսիսիաք Եղգուշը, Ամերիկացի Խան